ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ ԿԳՄՄՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Աշակերտների մոտիվացիան «Շրջված դասարան» մեթոդով

Անցկացման վայրը՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Արփենիկ Սարգսյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ս. Դարբինյանաի անվան 2 հիմնական դպրոց

Մարտունի

Բովանդակություն

1.Ներածություն 3

2. Գրական ակնարկ 5

3. Փորձարարական հետազոտություն 7

3.1-Խմբի նկարագիրը 7

3.2-Փորձարարական դասեր 7

3.2.1-Փորձարարական դաս-1 7

3.2.2-Փորձարարական դաս-2 8

4. Եզրակացություն 10

5. Օգտագործած գրականության ցանկ 11

6. Հավելված 12

Դասապլան-1 12

Դասապլան-2 16

1.Ներածություն

«Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե,
որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ
կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու
գործ է:
Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կրծքեն
ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան»

Կոմիտաս

Դպրոցական առարկաների համակարգում արվեստները,մասնավորապես երաժշտությունը,հանդես են գալիս ոչ միայն իբրև սովորողների գեղագիտական դաստիարակությունը ապահովող,նրանց հուզազգացմունքային զարգացումը կազմակերպող ,այլ նաև կրթական համակարգը մարդկայնացնող միջոց;
Պատահական չէ ,որ դեռ 5-րդ դարում Սհակ-Մեսրոպյանն առաջին հայկական դպրոցներում երաժշտությանը տվել է կարևոր դեր ու նշանակություն;
Փոխվում են ժամանակները,փոխվում են նաև ուսուցման ու դաստիարակության պահանջներն ու բովանդակությունը,մեթոդները,սակայն երաժշտությունը շարունակում է կատարել դաստիարակող և զարգացնող իր առաքելությունը;
Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունում՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունն առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու, ինքն իրեն և մյուսների հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունն ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել:
Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ անհատի ձևավորման և զարգացման վրա, տարբեր գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունն ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որն ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայությանը, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը,

գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

Երաժշտություն առարկայի հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- Դաստիարակել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը,
- Ձևավորել և զարգացնել երաժտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ,
- Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակություններն, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները,
- Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր,
- Արժևորել երաժշտության դերը մարդու և հասարակության կյանքում, գեղեցիկը զգալու, գիտակցելու արարելու, արվեստի աշխարհում անհատական դիրքորոշում, վերաբերմունք դրսևորելու միջոցով:

Երաժշտություն առարկայի առաջարկվող գործունեության ձևերն են.

- Երաժշտական ստեղծագործության ունկնդրում և երաժշտության պատմություն
- Երգերի անհատական և խմբային կատարում
- Անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա
- Երաժշտառիթմական շարժում

Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար:

2. Գրական ակնարկ

Դրական կողմերը

«Շրջված դասարան» մեթոդը մանկավարժական մոտեցում է, որը փոխում է ուսուցման մեթոդների ավանդական կազմակերպումը:

Սովորաբար տեսական մասը առկա ուսուցման միջոցով փոխանցվում է դասարանում, իսկ գործնական մասը կատարվում է տանը, ինտերակտիվ ուսուցման համար հնարավորինս շատ ժամանակ շահելու նպատակով: Այս մեթոդը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում է դասարանի շրջումը: Առավել հաճախ այդ նյութերն իրենցից ներկայացնում են փոքր տեսանյութեր, որոնք ուսուցիչներն իրենք են պատրաստում, իսկ աշակերտները առկա դասընթացից առաջ դրանք ուսումնասիրում են ինքնուրույն:

Ուսուցումն իրականացվում է դասի ընթացքում ուսուցչի անհատական աջակցությամբ: Դա հնարավորություն է տալիս ժամանակ խնայել ակտիվ մանկավարժական աշխատանքներ իրականացնելու, աշակերտների ըմբռնումը ստուգելու և դասընթացի հայեցակարգերը խորացնելու համար:

«Շրջված դասարան» մեթոդի նպատակները.

- պասիվ աշակերտների ներգրավվածությունը
- մոտիվացիայի բարձրացում
- տեսադիտման անսահմանափակ հնարավորություն
- ահատական մոտեցման հմտություններ

«Շրջված դասարան» մոդելի դրական և բացասական կողմերը.

Այս մոտեցումը լավ միջոց է աշակերտների և իրենց ուսուցիչների հարաբերությունները ամրապնդելու համար: Հաշվի առնելով այն փաստը, որ դասի տեսական մասն արդեն փոխանցվել է դասը սկսելուց առաջ, ուսուցիչը կարող է ավելի շատ ժամանակ տրամադրել աշակերտների կողքին լինելու համար և նրանց օգնել կատարել առաջադրանքներ այն պահին, երբ դրա կարիքն առավել շատ են զգում: Այն լավ միջոց է ուսուցումը դասաժամից առաջ և հետո տարբերակելու և անհատականացնելու համար: Այսպիսով աշակերտն հետևում է դասին իր համար ցանկալի տեմպով: Նա կարող է դիտել տեսանյութը այնքան անգամ, որքան ցանկանում է: Նրանք կարող են դանդաղեցնել կամ արագացնել իրենց ուսուցման տեմպը՝ ըստ իրենց կարիքների: «Շրջված դասարան» մեթոդում աշխատանքը հիմնված է աշակերտի վրա: Վերջինս դառնում է իր ուսուցման ղեկավարը և մասնակցում է դասընթացի համաստեղծմանը: Այսպիսով դասաժամին աշակերտի ներկայությանը նոր իմաստ հաղորդելն է:

Բացասական կողմերը

«Շրջված դասարան» մեթոդը ունի նաև թերություններ:

Երկար ժամանակ է պահանջվում տեսանյութեր պատրաստելու համար: Սակայն փոխանակման կայքերի շնորհիվ նյութերի ձևավորման աշխատանքները հեշտացվում են:

Այսպիսով մանկավարժական տեսանկյունից ուսուցիչների համար մեծ մարտահրավեր է դասընթացների կազմակերպումը և տնային աշխատանքների հանձնարարումը:

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացումը խթանել է «Շրջված դասարան» մեթոդի, հեռակա ուսուցման, տարբեր զանգվածային բաց առցանց դասընթացների ստեղծմանը:

Այսպիսով «Շրջված դասարան» մեթոդն առաջացնում է ուսուցչի վարքագծի խոր փոփոխություններ՝ դեմառդեմ մոտեցումից անցնելով կողք-կողքի մոտեցման:

3. Փորձարարական հետազոտություն

3.1-Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի իմ դպրոցի 7-րդ դասարանում:

Քանի որ այս դասարանի որոշ աշակերտներ ունեին ցածր առաջադիմություն և պասիվ դրսևորում դասապրոցեսների ընթացքում, այդ պատճառով ես որոշեցի կիրառել «Շրջված դասարան» մեթոդը, որպեսզի մեծանա աշակերտների հետաքրքրությունն ու մոտիվացիան դասապրոցեսներին մասնակցելու՝ այսինքն կարծիքներ հայտնելու, համեմատելու, վերլուծելու, իրենց մտքերն ազատ ու հստակ արտահայտելու, ինքնուրույնություն ձեռք բերելու վերաբերյալ:

Այս դասարանում սովորում են 25 աշակերտ՝ 8 աղջիկ և 17 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:

Երաժշտություն առարկան անցնում են շաբաթական 1 ժամ, և մեկ կիսամյակ այն դասացուցակում տեղադրված էր 3-րդ ժամին:

Այս դասարանի հիմնական խնդիրները.

Երգերը ճիշտ շնչառությամբ ,առոգանությամբ կատարելու կարողականությունն է

Ճիշտ մոտիվացիան,միջառարկայական կապը, հետաքրքրությունն ու ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին:

3.2-Փորձարարական դասեր

3.2.1-Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը՝ «Մակար Եկմալյան» և նրա « Հայր մեր» պատարագն է, «Հոգևոր երաժշտություն» թեմայից (տե՛ս դասապլան , էջ):

Քանի որ ընտրված է «շրջված դասարան» մեթոդը, աշակերտներին հանձնարարված էր տանը մի քանի անգամ ունկնդրել ՝ հատվածներ Մ. Եկմալյանի պատարագներից:

Դասը սկսվեց հարցադրումներով, մեծ և բուռն քննարկում տեղի ունեցավ աշակերտների և ուսուցչի միջև: Այն աշակերտները, որոնք նախկինում պասիվ դիրքորոշում ունեին դասի նկատմամբ, նրանք ևս բավականին աշխույժ սկսեցին արտահայտվել, կարծիքներ հայտնել, համեմատել:

Դասարանում ևս մեկ հատվածի ունկնդրում անցկացրեցինք: Քննարկվեց,թե ինչպես է ընդունվել քրիստոնեությունը,ով է Հայաստան բերել: Աշակերտները հետաքրքրված էին պատարագի կատարմամբ և փորձում կատարել երկձայն՝կանոնի ձևով:

Այնուհետև ունկնդրեցին «Քրիստոս ի մեջ,Տեր ողորմեա» երգերը, որից հետո բանավոր կրկնության մեթոդով ուսուցանվեց այն:

Երգը նաև աղոթք էր, դրա պատճառով այն պետք է կատարվեր զգացմունքային մեղմ ձայնով և համապատասխան տրամադրությամբ: Աշակերտներից մի քանիսը երգեցին ճիշտ առոգանությամբ, քանի որ ունեին ձայնային տվյալներ և ստեղծեցին երաժշտության բնույթին համապատասխան տրամադրություն:

Իսկ որոշ աշակերտներ ձայնային տվյալներ չունենալու պատճառով երգը կատարում էին սխալ ինտոնացիայով («Ֆալշ» հնչողությամբ և սխալ շնչառությամբ)/:

Նրանց առանձանցրեցի և ձայնավարժությունների միջոցով փորձեցինք շտկել խնդիրը: Այդ աշակերտներին հորդորեցի տանը շատ փորձելու և զարգացնելու ձայնային տվյալները: Այնուհետև բոլոր աշակերտները համեմատություն կատարեցին 2 երգերի միջև (անցածի և նորի):

Միջառարկայական կապ ստեղծվեց գրականության, պատմության և երաժշտության միջև: Այնուհետև աշակերտները մի փոքր բեմականացում կատարեցին, 2 աշակերտ կատարեցին ռիթմիկ նվագակցություն, 2 տղա և 2 աղջիկ կատարեցին երգին համապատասխան շարժումներ: Աշակերտների մոտիվացիան բարձրանում էր դասին ակտիվ մասնակցելու, երգելու, կատարելու, գիտելիքներ ձեռք բերելու առումով: Ամբողջ դասարանը ներգրավված էր դասապրոցեսին:

Վերը նշվածից հետո հարցադրումի միջոցով անցան նոր դասի հաղորդմանը, ծանոթացրեցի նոր դասին, պատմեցի և նորից հանձնարարեցի «շրջված դասարան» մեթոդով տանը ունկնդրել նոր թեմային վերաբերվող նյութերը: Վերջում 4 աշակերտ ստացան միավորային գնահատական, իսկ մնացածը արժանացան գովեստի խոսքերի:

3.2.2-Փորձարարական դաս-2

Դասն սկսեցի հարց ու պատասխանով՝ անցած թեմայի վերհիշմամբ: Աշակերտները բավականին ակտիվ մասնակցեցին և պատասխանեցին անցած նյութը, որը շատ տպավորվել էր նրանց մեջ:

«Մտագրոհի» մեթոդով ստուգվեց նրանց գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Այնուհետև օգտագործելով «շրջված դասարան» մեթոդն, աշակերտներն սկսեցին տրված նյութը ակտիվ քննարկել, վերլուծել, պատմել:

Աշակերտներից ոմանք համեմատականներ անցկացրեցին հայկական և արտասահմանյան կոմպոզիտորների և նրանց ստեղծագործությունների միջև: Ստեղծվեց հետադարձ կապ:

Միջառարկայական կապ ստեղծվեց ժող. երգի հետ, քանի որ այն ստեղծել էր հենց ինքը՝ ժողովուրդը: Պարզվեց, որ մի քանի պասիվ աշակերտներ ժողովրդական երգեր շատ են սիրում: Դա զգացվեց նրանց նկատելի կերպով աշխուժացումից և մի աշակերտ պատմեց իր մանկության ամենաշատ ունկնդրած երգերից,որ միշտ լսում էր իր պապիկի կատարումներից: Հետո միացրեցի ժողովրդական մեղեդիներից, որի հնչյունների ներքո աշակերտներն սկսեցին նկարել իրենց ստացած տպավորությունները: Միջաառարկայական կապ ստեղծվեց կերպարվեստի հետ ևս: Աշակերտների մոտիվացիան բարձրացնելու նպատակով նրանց հանձնարարեցի հորինել աքրոստիքոսներ և հորինել մեղեդի: Սա աշակերտներին գեղագիտական ճաշակ է հաղորդում: Աշակերտները դասագրքից կարդացին կոմպոզիտորին նվիրված տեքստը, վերլուծեցին երաժշտության և գրական տեքստի բնույթը և համապատասխանությունը:

Հաջորդիվ բանավոր կրկնության մեթոդով ուսուցանվեց նոր երգը, որը պետք է կատարեին ուրախ տրամադրությամբ, փոքրիկ ֆրազաներով, ճիշտ շնչառությամբ, ճիշտ առոգանությամբ, ճիշտ ռիթմով և ճիշտ շեշտադրությամբ: Երգն ուներ ռիթմիկ հատվածներ, որը 5 աշակերտի մոտ չէր ստացվում: Այդ պատճառով նրանց առանձնացրեցի, փորձելով լուծել այդ խնդիրը ձայնավարժություններ կատարելու միջոցով: Որից հետո բոլորը նկատեցին տեքստին համապատասխան պատկերներ:

Քանի որ գլխավոր թեման եզրափակվում էր, հանձնարարվեց ամփոփում: 4 աշակերտներ ստացան միավորային գնահատական, իսկ մնացածները արժանացան գովեստի խոսքերի:

«Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և. իր ոգևորությունով կենդանության շունչ է շնչում

նրան, որ նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի, դրա համար նրան

թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միմիայն են

կախարդական աշխարհքում, որ կոչվում է երաժշտություն»: Հովհաննես Թումանյան

4. Եզրակացություն

Աշակերտների մոտիվացիան բարձրացնելու համար անցկացվեցին 2 փորձարարական հետազոտական դասեր՝ «Շրջված դասարան» մեթոդով, որտեղ պասիվ աշակերտներն իրենց դրսևորեցին բավականին ակտիվ, ամբողջ դասարանը ներգրավվեց դասապրոցեսների լիարժեք կայացմանը, հաղորդվեցին գիտելիքներ, կարծիքներ: Աշակերտները խոստովանեցին, որ իրենց շատ դուր եկավ այս մեթոդը: Նրանք մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրեցին տրված թեման, դիտարկեցին կապը պարարվեստի, կերպարվեստի, գրականության, ժողովրդական և հոգևոր երգերի հետ, ծանոթացան հայ կոմպոզիտորների և նրանց ստեղծագործությունների հետ, հասկացան, որ երաժշտությունը միջնորդ է հանդիսանում մյուս արվեստների միջև, արժևորեցին հայկական մշակույթը:

Սովորողներն զգացին, որ չնայած արվեստները մեկը մյուսից տարբերվում են ձևով, բովանդակությամբ կամ այլ հատկություններով, այնուամենայնիվ նրանք միմյանց հետ բազմաթիվ թելերով կապված են: Հետևաբար արվեստներից մեկի իմացությունը օգնում է մյուսների ավելի խոր ըմբռնմանը:

Այսպիսով, ես եկա այն եզրակացության, որ «Շրջված դասարան» մեթոդն օգնեց աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը, պասիվ աշակերտների ներգրավածությանն ու ակտիվացմանը, նպաստեց նրանց հետաքրքրությունների աճմանն ու գիտելիքների ավելացմանը:

5. Օգտագործած գրականության ցանկ

1. «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ
   Երևան 2012
2. Կոմիտաս, Մ. Եկմալյան հոդվածներ և ուսումնասիրություններ
   Երևան 1941
3. Wikipedia
4. http://yotub
5. «Երաժշտություն» 7-րդ դասարան
   Յու.Վ.Յուզբաշյան
   Ա.Ա.Փահլևանյան /Զանգակ 97/ Երևան 2011

6. Հավելված

Դասապլան-1

Առարկա	Երաժշտություն	Ամսաթիվ	11.10.2021	Կիսամյակ	I	Դասարան	7
Թեմա	«Հոգևոր երաժշտություն Մ. Եկմալյան, «Հայր մեր» պատարագ Ունկնդրել «Քրիստոս ի մեջ և Տեր ողորմեա» խմբերգերը Ուսուցանել «Քրրստոս ի մեջ» խմբերգը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, հեռախոս, համակարգիչ						
Դասի նպատակը	Ծանոթացնել պատարագի հետ հետ Կարևորել հոգևոր երաժշտության,պատմության և գրականության կապը Ձևավորել հմտություններ հոգևոր երաժշտությունից հատվածներ կատարելու, բնութագրելու, վերլուծելու Երգերը կատարել ճիշտ առոգանությամբ ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել Արժևորել հոգևոր երաժշտության և պատարագի նշանակությունը						

Վերջնար-դյունքները	Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի հոգևոր արվեստի նմուշներով Երգի շարականները ճիշտ զգացողությամբ և առոգանությամբ Համեմատի հակադիր կամ նույնանման բնույթի ստեղծագործությունները Ձևավորվի երաժշտական ճաշակ իբրև քրիստոնյա Դրսևորվի հետաքրքրության երաժշտական կատարումների նկատմամբ Արժևորի հոգևոր երգարվեստի ժանրը Կարողանա կատարել շարականներ

Գործողություններ ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով, աշա-ներտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել Հարցադրումներ	Ո՞րն էր նախորդ դասի թեման ,,Առավոտ լուսո,, ,,Տեր ողորմյա,,	մտագրոհ

10ր	Աշակերտները «Շրջված դասարան» մեթոդով սկսեցին քննարկել տրված տեսանյութերը Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերայից և ունկնդրված խըմ-բերգերը: Վերլուծեցին, բնութա-գրեցին,համեմատե-ցին, կարծիքներ հայտնեցին: Ծանոթ. Հոգևոր երաժշտության տեսակներին	Հարցադրումներով պասիվ աշակերտներին ևս ներգրավվել ընդգրկել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցեր	Ո՞վ է Մ. Եկմալյանը Ի՞նչ շարականներ է գրել Սիրու՞մ ես հոգևոր երգերը, ԻՆՉ գիտես Կոմիտասի շարականներից	Հարցադրու-մների մեթոդ
5ր	Ձայնավորժություն-ներ կատարեցին: Սովորեցին նոր երգը,	Կատարել ճշտումներ և շտկումներ Ուղղորդել	Ո՞վ է եղել Կոմիտասը Ո՞ր պատմիչներից կներկայացնես	
10ր	նվագակցությամբ կատարեցին 2 տղա,1 աղջիկ հոգևոր երգերից	Հետևել աշակերտներին	Հայկական ո՞ր պատարագն է քեզ հոգեհարազատ Ո՞ր խմբերգը քեզ դուր եկավ	«Շրջված դասարան» մեթոդ

15ր	Տեսադիտում անցկացվեց Համեմատեցին երկու խմբերգերը Բացեցին դասագիրքը		Հետադարձ կապ Ամփոփեցին և ամրապնդեցին անցած հոգևոր երգերը	
10ր	Ընթերցեցին նոր դասի տեքստը	Նոր թեմայի հաղորդում Հանձարարություն ներ տալ Պատասխանել աշակերտների հարցերին	Ձեզ դուր եկա՞վ արդյոք «Շրջված դասարան» մեթոդը	

Դասապլան-2

Առարկա	Երաժշտություն	Ամսաթիվ	18.11.2021	Կիսամյակ	I	Դասարան	V
Թեմա	«Երաժշտություն և գրականություն» Վ.Ա.Մոցարտ «Կախարդական սրինգ» օպերա Ունկնդրել հատվածներ Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերայից Ուսուցանել Մոցարտի «Գարնան կարոտ» երգը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, հեռախոս, համակարգիչ						
Դասի նպատակը	Ծանոթանալ արտասահմանյան կոմպոզիտորներին և նրանց ստեղծագործություններին (օպերաներին) Արժևորել նրանց ավանդը համաշխարհային օպերային արվեստի զարգացման գործում Համեմատել ճանաչել հայ և արտասահմանյան կոմպոզիտորների հանրահայտ օպերաները Կարևորել օպերային արվեստում երաժշտության և գրականության կապը Ձայնավարժությունների օգնությամբ կատարել շտկումներ Երգը կատարել կայտառ, ճիշտ ռիթմով և առոգանությամբ						

Վերջնար-դյունքները	Տարբերի և ցույց տա հայկական և արտասահմանյան օպերային երաժշտության բնութագրական առանձնահատկություններն և ընդհանրությունները Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի արտասահմանյան համաշխարհային երաժշտական արվեստի գոհարներով Երգերը կատարի ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, արտահայտիչ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով Համեմատական անցկացվի հայկական և արտասահմանյան երաժտական արվեստի միջև

Գործողություններ ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով Աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել դասարանին Հարցադրումներ	Ո՞րն էր անցած դասի թեման Ո՞վ է Ա.Մոցարտը	Հարցադրում-ների մեթոդ
10ր	Օգտագործելով «Շրջված դասարան» մեթոդը աշակերտներն սկսեցին ակտիվ քննարկել, վերլուծել նախապես տանը դիտված և ունկդրած նյութերից Համեմատականներ անցկանցնել անցածի և նորի միջև, բնութագրեցին կերպարները , կարծիքներ հայտնեցին Ծանոթացան օպերայի լիբրետոյի հետ Նկատեցին օպերայի	Խրախուսել և գովեստի խոսքերով բարձրացնել աշակերտների մոտիվացիան, հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը Աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին Տալ ուղղորդող	Ի՞նչ հանրահայտ ստեղծագործություններ (օպերաներ) է գրել Ձեզ դու՞ր է	Մտագրոհ «Շրջված դասարան» մեթոդ

	որոշ հերոսներին	հարցեր	գալիս արտասահման-յան օպերան	
10ր	Միջառարկայական կապ ստեղծվեց հեքիաթի հետ Քննարկեցին, համեմատեցին հեքիաթային հերոսներին Բացեցին գրքեր Կարդացին նոր նյութի համապա-տասխան տեքստը Նոր ուսուցանվող երգը սովորեցին առանձին ֆրազներով	Հետևել դասին Հետևել աշակերտներին Կատարել ճշտումներ և շտկումներ	Օպերային ո՞ր հեքիաթային կերպարն կնմանվեիր Գնահատու՞մ ես Հայկական օպերային արվեստը	Բանավոր կրկնության մեթոդ
10ր	Կատարեցին ռիթմիկ ձայնավար-ժություններ Մի քանի աշակերտներ կատարեցին երգին համընթաց ռիթմիկ ծափահարություններ Պատասխանեցին գրքում գրված հարցերին(հարցեր և առաջադրանքներ բաժնից) Վերջում ամփոփեցին ընդհանուր, գլխավոր թեման	Կատարել ճշտումներ և շտկումներ Հարցադրումներ	Ձեզ դուր եկա՞վ նոր երգը Սիրու՞մ եք նկարել	Հարց ու պատասխան մեթոդ